մարմինն, եւ լուացեալ բացան աչք նորա և լուսաւորեցաւ։ Եւ սկսաւ ձայնել զքաղաքացիսն իւր՝ թէ եկայք տեսէք զհրաշս զայս զի անգլուխ աստուած գտաւ ի միջի մերում։ Իսկ մեծազգի կինն ի վաղիւն եկեալ որոնէր զսիւնն և զսուրբ մարմինն և ոչ գըտաւ։ Վասն որոյ ի խոր խոցեցաւ զի կամէր առնել զնա ի քաղաքն իւր յՀսպանիա։ Որ և երևեալ սըրբոյս ի տեսլեանն թէ գտցես զիս ի Սպանիա եւ մխիթարեալ գնաց, եւ եդիտ արդարև զսուրբ մարմինն պաշտեալ ի քաղաքացւոց՝ անգլուխ աստուած։ Այժմ զտեղի սեանն ոչ ոք ճանաչէ, միայն թէ ի հարաւային կողմն Եաֆայու գրի յԱսմաւուրն» (Հան. էջ 68)։

Հայերը Ցոպպէի մէջ հին օրերէն ունին ընդարձակ վանք մը և եկեղեցի՝ յանուն Ս. Նիկողայոսի, ուխտաւորներու համար յատուկ սենեակներ։ (Անոնց պատմութիւնը և նկարագրութիւնը տեսնել Հ. Վ. Ե. էջ 300–317)։

6. Ցոպպէ–Գազա. (աւանդութիւններ).— Կարմեղոսէն Ցոպպէ՝ ծովեզրեայ դաշտը հիւսիս–արեւմուտքէն հարաւ–արևելք կ'ընդարձակուի դէպի հարաւ յառաջանալով և կը վերջանայ Գազայէն անդին խառնուելով անապատին հետ։ Այս դաշտին հարաւային մասը կը կազմէ Փղշտացւոց այն երկիրը որ յաճախակի կը յիշուի Ս. Գրոց մէջ, այն շարունակական պատերազմներուն պատճառաւ զոր այս անհանդարտ ժողովուրդը կը մղէր Իսրայելացւոց դէմ։ Այս դաշտը կը կոչուէր Տարոնա, քաղդիերէն բառ մը որ կը նշանակէ հարաւ։

Ցեսուի գրքին համաձայն, այս երկիրը բաժնուած էր փղշտացւոց հինգ իշխաններուն միջև, որոնք են